ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXVIII, № 8, 1975

УДК 635.98

Լ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԾԱՌԱԹՓԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՐՏԻԶԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ամփոփված են Հայաստանի պայմաններում ծառաթփային բույսերի պարտիզային ձևերի փորձարկման արդյունքները անցած 40 տարիների ընթացքում։ Գրականության մեջ նշված ընդամենը 186 պարտիզային ձևերից ներկայումս հանրապետության կանաչ տնկարկներում հանդիպում են 75-ը (46 տեսակների ներկայացուցիչներ)։ Տրվում է այդ պարտիզային ձևերի բնութագրումը և կանաչապատման ընագավառում օգտագործման հնարավորությունը։

Դեկորատիվ պարտիզագործության բնագավառում գնալով մեծանում է ծառաթփային բույսերի պարտիզային ձևերի նշանակությունը։ Դրանք պարկային կոմպոզիցիաների ամենաարժեքավոր տարրերն են, որոնք օգտագործվում են հիմնականում ծալալային և գունային կոնտրաստների ձևավորման, պեյզաժի աշխուժացման, ռիթմիկ տնկարկների շեշտման, դինամիկ և ստատիկ խմբերի ստեղծման և հատկապես սոլիտերների ընտրության ժամանակ։ Բրգաձև, գնդաձև, լացող, կարմրասաղարթ, սպիտակասաղարթ և խայտաբղետ պարտիզային ձևերը անփոխարինելի տարրեր են պարկային կոմպոզիցիաների համար և նպատակասլաց օգտագործելու դեպքում պեյզաժին տալիս են մեծ արտահայտչականություն և հստակություն։

Պարտիզային ձևերը հին Հայաստանում օգտագործվել են անհիշելի վաղ ժամանակներից։ Դեռևս մեր թվարկությունից 400 տարի առաջ ճանապարհորդելով Հայաստանում, Ստրաբոնը տեղեկություններ է հաղորդում բրգաձև բարդու մասին, որը լայնորեն մշակվում էր Հայաստանում։ Պարտիզային ձևերի մասին տեղեկություններ են հանդիպում նաև հայ պատմագիրների աշխատություններում (Մ. Խորենացի, Փ. Բուզանդ, Մ. Կաղանկատվացի, Լեո և այլն)։ Հատկապես հաճախ են հիշվում ավանդույթային պարտիզային ձևերը՝ բրգաձև բարդին, լացող ուռենին, գնդաձև ղարաղաչը, գեղատեսիլ բարդին և այլն։

Սակայն այդ և հետագա դարերում դեկորատիվ պարտիզագործության պրակտիկայում օգտագործված դեկորատիվ ձևերը հատուկենտ են եղել միայն։ Երևանի բուսաբանական այգու հիմնադրումից անմիջապես հետո (1935 թվական) ղանգան մասնագետների կողմից սկսվել է պարտիզային ձևերի մասսայական փորձարկումը։ Ցավոք, այդ տեսակների մեծ մասը ներկայումս ոչնչացվել է և փորձարկված 186 պարտիզային ձևերից ներկայումս հանրապետության տարածքում հանդիպում են միայն 75-ը [1—9, 11—17, 19—28]։

Ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, վերոհիշյալ հեղինակների աշխատություններում նշված պարտիզային ձևերը մեծ մասամբ միանգամայն հեռանկարային են հանրապետության ամենատարբեր բնակլի-

մայական պայմաններում օգտագործելու համար։ Դրանց մի մասի ոչնչանալու պատճառը պետք է համարել անբավարար ագրոտեխնիկան և անուշադրությունը։ Տվյալ դեպքում մենք դատում ենք ելնելով պարտիզային ձևերի հիմնական տեսակների վարքից։ Ճիշտ է, մի շարք հեղինակներ [17, 18] նշում են, որ հիմնական տեսակների հետ համեմատած պարտիզային ձևերը պակաս դիմացկուն են և հատկապես աչքի են ընկնում անբավարար ցրտադիմացկունությամբ, այնուամենայնիվ, փորձարկման արդյունքները ցույց են տալիս, որ չնչին բացառությամբ այդ տեսակները լավ են հարմարվել մեր հանրապետության յուրահատուկ հողակլիմայական պայմաններին՝ հատկապես Երևանում, Կիրովականում և Իջևանում։ Որոշ տեսակներ էլ հանդիպում են Հայկական ՍՍՀ-ի տարբեր բնակավայրերում, որտեղ օգտագործվում են կանաչապատման պրակտիկայում։

Հայաստանում հանդիպում են նաև այնպիսի պարտիզային ձևեր, որոնք հիմնականում մերձարևադարձային ծագում ունեն և փորձարկվել են միայն Իջևանի, Մեղրու կամ Բագրատաշենի պայմաններում։ Այդ պարտիզային ձևերը հեռանկարային են միայն Հայկական ՍՍՀ-ի մերձարևադարձային գոտու պայմանների համար (Cupressus goveniana f. pendula Carr; Cupressus sempervirens L. f. horisontalis Gord; C. s. f. pyramidalis Nym.; Euonymus japonica f. microphylla jaq; E. j. f. viridi-variegata Rehd; E. fortunei (Turcz.) Hand.-Mazz., Ligustrum ovalifolium v. variegatum T. Moore. և այլն)։

Ստորև բերվում է պարտիզային այն ձևերի ցուցակը, որոնք այս կամ այն ժամանակ փորձարկվել են Երևանի բուսաբանական այգում և նրա լեռնային բաժանմունքներում, ինչպես նաև զանազան բնակավայրերի կանաչ տրնկարկներում (աղյուսակ)։

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են հետևյալ հապավումները.

1. Հեռանկարայնությունը (սյունակ 5)։ Օգտագործելով Հայաստանի դենդրոլոգիական շրջանացման սխեման [9, 10], մենք այս սյունակում նշում ենք այն շրջանը կամ ենթաշրջանը, որտեղ կարելի է մշակել տվյալ տեսակը։ Տառերի նշանակությունը հետևյալն է.

Գ—գլխավոր տեսակ։ Աճում և զարգանում է բնականոն կերպով, էկոլոգիական ճնշվածություն հանդես չի բերում։

Ե—երկրորդական տեսակ։ Ցուցաբերում է էկոլոգիական որոշ ճնշվածություն։ Կարելի է օգտագործել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում։

Դենդրոլոգիական շրջանների և ենթաշրջանների համարակալումը՝ ըստ Լ. Վ. Հարությունյանի «Հայաստանի դենդրոլոգիական շրջանացման սխեմայի» [9, 10]։

2. Բազմացման ձևերը։ Կանաչապատման մասնագետներին օգնություն ցույց տալու նպատակով աղյուսակում բերվում են տվյալներ պարտիզային ձևերի բազմացման հնարավորությունների վերաբերյալ։ Հապավումները նշանակում են.

Ս—հեշտությամբ է բազմանում սերմերով,

Կ—բազմանում է կտրոններով,

Ա—անդալիսով,

Պ—պատվաստի միջոցով։

Հայաստանում փորձարկված ծառա-թփային բույսերի պարտիզային ձևերի ցուցակ

Պարտիզային ձևեր	Գրական աղբյուրը	Որտե՞ղ է հանդիպում	Հեռանկարայնություն	Բազմացման ձևը	Բույսի դեկորատիվության խումբը
Acer negundo L. f. aureo-marginata Schwer.	[20]	Կիրովական	Գ. 3—6, 7—8, 12—15, 18—19, 23—29	Ս. Պ.	VII գ
Acer negundo L. f. aureo-variegatum (Wesmael) Späth.	[11]	Ստեփանավան	Գ. 3—6, 7—8, 12—15, 18—19, 23—29	Ս. Պ.	VII գ
Acer negundo L. f. variegatum (Jacq.) Ktze.	[4, 11, 20]	Կիրովական, Երևան, Ստեփանավան	Գ. 3—6, 7—8, 12—15, 18—19, 23—29	Ս. Պ.	VII-
Acer negundo L. f. violaceum (Kirchn.) grad. nova	[11]	Ստեփանավան	Գ. 3—6, 7—8, 12—15, 18—19, 23—29	Ս. Պ.	
Acer platanoides L. f. globosum (Nichols.) Schwerin	[4, 11]	Երևան, Կիրովական	Գ. 2, 4—6, 7—9, 12—15, 17—19	Ս. Պ.	IIգ
Acer platanoides f. Schwedleri (Koch) Schwerin	[11]	Ստեփանավան	Գ. 2, 4—6, 7—9, 12—15, 17—19	Ս. Պ.	VIկ
Acer psudoplatanus L. f. Handyeryi Späth	[11]	Ստեփանավան, Կիրովական	Գ. 2—6, 7—10, 12—15, 17—19, 23—27	Ս. Պ.	VIIկ
Acer psudoplatanus f. Leopoldii (Lem.) Schwerin	[4, 11, 20]	Կիրովական, Ստեփանավան	Գ. 2—6, 7—10, 12—15, 17—19, 23—27	Ս. Պ.	VIIգ
Acer psudoplatanus f. purpureum (Loud.) Rehd.	[4, 2 0]	Կիրովական, Երևան, Ստեփանավան	Գ. 2—6, 7—10, 12—15, 17—19, 23—27	Ս. Պ.	VIկ
Acer saccharinum L. laciniatum (Carr.) Rehd.	[4]	Երևան, Նոր Հաճըն	Ծ. 2—4—6, 7—9, 12—15, 17—19	Ս. Պ.	V
Albizzia julibrissin Durazz. var. rosea Mouillef.	[4]	Երևան	Գ. 5, 14, 21—22, 25, 28	Ս.	VIII
Amorpha alata Benth. f. angustifolia Pursh.	[23]	Սևան	Ծ. ամենուրեք	Ս.	V
Amorpha californica Nutt. f. angustifolia Bge.	[23]	Կիրովական	Ծ. 5, 14, 21—22, 25, 28	Ս.	V
Berberis provicialis Schroed. v. serrata Schneid.	[30]	Երևան	Ծ. ամենուրեք	Ս.	V
Berberis thunbergii DC. f. atropurpurea Chenault.	[23]	Սևան, Կիրովական, Երևան	Ծ. ամենուրեք	Ս.	VIկ
Berberis vulgaris L. f. atropurpurea Rgl.	[4, 7)	Երևան, Հոկտեմբերյան	Ծ. ամենուրեք	Ս.	VIկ
Berberis visonae Hemsl. et Wils. v. subcaulialata Schneid.	[28]	Երևան	Ծ. ամենուրեք	Ս.	V
Biota orientalis Endl. f. articulata hort.	]24]	Իջևան	Գ. 5, 14, 21, 22, 25, 28	Ս. կ.	V
Biota orientalis Endl. f. aurea Hornior	[4]	Երևան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	Vգ
Biota orientalis Endl. f. aurea nana hort.	[19, 24]	Ստեփանավան, Իջևան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	VIգ, IVգ
Biota orientalis Endl. f. cupressoides hort.	]7, 22]	Կիրովական, Երևան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	IIգ, Iբ
Biota orientalis Endl. f. compacta Beissn.	[19]	Ստեփանավան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	IIգ
Biota orientalis Endl. f. compacta Ungerii Beissn.	[4]	Երևան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	IIգ
Biota orientalis Endl. f. rosedalis compacta Hormor	[24]	Իջևան	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	IIգ
Biota orientalis Endl. f. flagelliformis Jacq.	[23]	Կիրովական	Գ. 3—5, 13—14, 23—25, 28, 29	Ս. կ.	II
Buddleia davidi Franch. v. magnifica (Wils.) Rehd. et Wils.	[23]	Կիրովական	Ծ. 5, 14, 21, 22, 25, 28	Ս. կ.	V
Buddleia intermedia Carr. v. insignis Rehd.	[28]	Երևան	Ծ. 5, 14, 21, 22, 25, 28	Ս. կ.	V
Buxus sempervirens L. f. argenteo-variegata (Weston) Schelle	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 13—14, 23—25, 28	կ.	VII-
Buxus sempervirens L. f. bullata Kirchn.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 13—14, 23—25, 28	կ.	V
Buxus sempervirens L. f. compacta nana hort.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 13—14, 23—25, 28	կ.	IIգ
Buxus sempervirens L. f. myrtiilolia (Lem.) Schneid.	[23]	Սևան	Գ. 2—5, 7—9, 13—14, 23—25, 28	կ.	V
Caragana arborescens Lam. f. nana Späth.	[28]	Երևան	Ծ—ամենուրեք.	Ս. Պ.	IVգ
Caragana arborescens f. pendula Dipp.	[6]	Լենինական	Ծ—ամենուրեք	Ս. Պ.	III
Catalpa hybrida späth f. purpurea Rehd.	[20]	Կիրովական	Ծ. 4—5, 13—14, 23—25, 28	Ս. կ.	VIկ
Celastrus orbiculata Thunb. v. punctata (Thunb) Makino	[23, 28]	Երևան, Սևան	Ծ.—ամենուրեք	Ս.	VII-
Chamaecyparis lawsoniana (Murr.) Parl. f. argentea (Gord) Beissn.	[24]	Իջևան	Գ. 4—5, 13—14, 21, 25, 28	Ս. կ. Պ.	VI-
Chamaecyparis lawsoniana f. Allumii (Smith) Beissn.	[24]	Իջևան	Գ. 4—5, 13—14, 21, 25, 28	Ս. կ. Պ.	VI-
Chamaecyparis lawsoniana f. glauca (Jaeg.) Beissn.	[24]	Իջևան	Գ. 4—5, 13—14, 21, 25, 28	Ս. կ. Պ.	VI-
Chamaecyparis pisifera Sieb. et Zucc. f. filifera Beissn.	[16]	Երևան	Գ. 4—5, 13—14, 21, 25, 28	Ս. կ. Պ.	V
Cupressus govenlanai Gord. f. pendula Carr.	[24]	Իջևան	Ծ—4, 28	Ս.	III
Cupressus sempervirens L. f. horizontalis (Mill.) Gord.	[24]	Իջևան	Գ—4, 28	Ս.	IV-
Cupressus sempervirens L. f. pyramidalis Nym.	[8]	Երևան	Գ—4, 28	Ս.	Iբ
Corylus alba L. f. argenteo-marginata (Rehd.) Schelle	[23, 33]	Կիրովական, Երևան	Ծ—ամենուրեք	կ.	VII-
Corylus avellana L. f. atropurpurea Petz et Kirchn.	[4]	Երևան	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	Ս.	VIկ
Cotoneaster glaucophylla Franch. f. serotina Stopf.	[23]	Կիրովական	Ծ—ամենուրեք	Ս. Պ.	V
Cotoneaster integerrima Medic i. rotundifolia R. Abr.	[1]	Սևան	Ծ—ամենուրեք	Ս. Պ.	V
Crataegus oxyacantha L. f. Paulii Rehd.	[7, 23]	Կիրովական, Երևան, Բյուրական	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	Ս.	VIII լ
Deutzia discolor Hemsl. f. plena Schneid.	[23]	Կիրովական	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	կ. Ս.	VIII լ
Deutzia rosea (Lemoine) Rehd. f. campanulata (Lemoine) Rehd.	[30]	Երևան	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	կ. Ս.	VIII
Deutzia scabra Thunb. f. rosea-plena hort.	]22]	Կիրովական	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	կ. Ս.	VIII լ
Deutzia scabra Thunb. f. plena (Maxim.) Schneid.	[4]	Երևան	Գ. 2—5, 7—15, 18, 23—29	կ. Ս.	VIII լ
Euonymus japonica L. f. f. radicans Rgl.	[23]	Կիրովական	Գ. 4—28		
Euonymus japonica L. f. f. microphylla (Jacg.) Beissn.	[24]	Իջևան	Գ. 4—28	Ս. կ.	V
Euonymus fortunei (Turez.) Hand.—Mazz. f. viridi-variegata Rehd.	[7]	Երևան	Գ. 4—28	Ս. կ.	VII-
Fagus silvatica L. f. purpurea macrophylla hort.	[24]	Իջևան	Գ. 2, 4, 5, 13	Ս. կ.	VIկ, V
Fraxinus americana L. f. asplentifolia Kirch.	[23]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս.	V
Fraxinns americana L. f. pedula Ait.	[23]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. Պ.	III
Fraxinus excelsior L. f. nana (Pers.) Hayne	[7]	Արտաշատ	Գ. ամենուրեք	Ս. Պ.	IIգ
Fraxinus excelsior L. f. diversifolia (Ait.) Lingelsh.	[6[	Լենինական	Գ. ամենուրեք	Ս. Պ.	V
Fraxinus excelsior L. f. monophylla pendula hort.	[20]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. Պ.	V—III
Fraxinus excelsior L. f. pendula Ait.	[6, 16, 20]	Կիրովական, Լենինական, Երևան	Գ. ամենուրեք	Ս. Պ.	III
Gleditschia triacanthus L. f. inermis (L.) Zbl.	[4, 5, 7]	Երևան, Ղափան	Ծ. 3, 4, 12—14, 18, 23—25, 28, 29	Ս. Պ.	
Hibiscus syriacus L. f. rosea plena hort.	[4]	Երևան	Գ. 4, 13, 14, 20—25, 28,	Ս.	VIII լ
Juniperus chinensis L. f. Ellmanyeriana hort.	[27]	Երևան	Գ. 4, 13, 14 ,23—25, 28, 29	Ս. կ.	
Juniperus chinensis L. f. Pfitzeriana Spaeth.	[27]	Երևան	Գ. 4, 13, 14 ,23—25, 28, 29	Ս. կ.	IVգ
Juniperus communis L. f. hibernica Gord.	[7]	Արզնի	Գ. 4, 13, 14 ,23—25, 28, 29	Ս. կ.	Iբ
Juniperus foetidissima Willd. v. squarrosa Medw.	[31]	Ստեփանավան	Գ. 4, 13, 14, 23—25. 28, 29	Ս. կ.	V
Juniperus virginiana L. f. glauca Carr.	[24]	Իջևան	Գ. 4, 13, 14, 23—25. 28, 29	Ս. կ.	VI-
Juniperus virginiana L. f. globosa Beissn.	[24]	Իջևան	Գ. 4, 13, 14, 23—25, 28, 29	Ս. կ.	IIգ
Juniperus virginiana L. f. pyramidalis Carr.	[24]	Իջևան	Գ. 4, 13, 14, 23—25, 28, 29	Ս. կ.	Iբ
Juniperus virginiana L. f. pyramidiformis D. Hill.	[24]	Իջևան	Գ. 4, 13, 14, 23—25, 28, 29	Ս. կ.	Iբ
Juglans sieboldiana Maxim. v. cordiformis Maxim.	[30]	Երևան	Ծ—ամենուրեք	Ս. կ.	V
Ligustrum ovalifolium Hassk. f. variegatum T. Moore.	[30]	Երևան	Ծ. 4, 13, 14, 20—25, 28	Ս.	VII-
Ligustrum vulgare L. f. aureum Dipp.	[20, 30]	Երևան, Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. կ.	VIգ
Ligustrum vulgare L. f. chlorocarpum Loud.	[12, 14]	Երևան, Ջերմուկ, Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. կ.	
Ligustrum vulgare L. f. pyramidale Dipp.	[20]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. կ.	VIբ
Ligustrum vulgare L. f. sempervirens Loud.	[4, 28]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	V
Lonicera tatarica L. f. lutea Loud.	[29]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	
Lonicera tatarica L. f. latifolia Loud.	[29]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	V, VIII
Lonicera tatarica L. f. parvifolia Jaeg.	[29]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	V
Lonicera tatarica f. grandiflora Rehd.	[23]	Սևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	V
Lycium chinense Mill. f. ovatum (Veillard.) Schneid.	[28]	Երևան	Ծ. 3, 7, 8, 12, 14, 23—25	Ս. կ.	V
Malus purpurea (Barbier) Rehd. f. aldenhamensis (Gibbs.) Rehd.	[23, 33]	Ջերմուկ, Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	VIկ
Malus schideckersi (Spaeith) Zbl. f. pendula hort.	[23]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. Պ.	III
Morus alba L. f. cuculata hort.	[7]	Ղափան	Գ. 4, 13, 14, 20—25, 28	Ս. Պ.	V
Morus alba L. f. pendula Dipp.	[23]	Կիրովական	Գ. 4, 13, 14, 20—25, 28	Ս. Պ.	III
Philadelphus satsumanus Mig. f. nicocoensis Rehd.	[29]	Երևան, Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. Պ.	
Rhiladelphus coronarius L. f. plena hort.	[15]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	VIII լ
Picea pungens Engelm. f. glauca Reg.	[4. 20]	ամենուրեք	Գ. 3—6, 7—10, 12—15, 17—19, 23—29	Ս. կ.	VI-
Pinus pinaster Sol. v. Hamiltonii Part.	[19]	Ստեփանավան	Գ. 1, 2, 5—6, 13—15, 18, 19, 26	Ս. կ.	
Pinus montana Mill. f. mughus Willk.	[26]	Երևան	Գ. 4, 7—3, 13, 14, 23—25, 28, 29	Ս.	IV
Populus pyramidalis Rozier.		ամենուրեք	Գ. ամենուրեք	Ս.	Iբ
Populus simonii Carr. f. fastigiata Schneid.	[5, 6, 7]	Երևան	Գ. ամենուրեք	կ.	Iբ
Populus simonii Carr. f. pendula Schneid.	[5, 6, 7]	Երևան	Գ. ամենուրեք	կ.	III
Prunus divaricata Ldb. f. atropurpurea Jacq.	[9, 30]	Երևան, Կիրովական, Արտաշատ	Գ. ամենուրեք	կ.	VIկ
Quercus robur L. f. fastigiata (Lām) DC.	[7]	Երևան, Լենինական, Աբովյան	Գ. 2—6, 7—9, 12—15, 18, 19, 23—29	կ. Պ. Ս.	Iբ
Quercus robur L. f. tardiflora Gzern.	[10]	Երևան	Գ. 2—6 ,7—9, 12—15, 18, 19, 23—29	Պ.	V
Rhus typhina L. f. dissecta Rehd.	[15]	Երևան	Ծ. 4, 13—14, 20—25, 28	Պ.	V
Robinia pseudoacacia L. f. Decaisneana (Care) Voss.	[33]	Կիրովական	Գ. 3, 4, 7—9, 12—15, 18, 23—29	Ս.	V
Robinia pseudoacacia L. f. microphylla (Loud.) Rehd.	[23]	Կիրովական	Գ. 3, 4, 7—9, 12—15, 18, 23—29	Ս. Պ. կ.	V
Robinia pseudoacacia L. f. umbraculifera (DC.) Rehd.	[4]	ամենուրեք	Գ. 3, 4, 7—9, 12—15, 18, 23—29	Ս. Պ. կ.	IIգ
Robinia pseudoacacia L. f. unifoliola (Talou) Rehd.	[23]	Երևան	Գ. 3, 4, 7—9,12—15, 18, 23—29	Ս. Պ. կ.	V
Salix alba L. f. vitellina pendula Rehd.	[4, 7, 22]	Կիրովական	Գ. ամենուրեք	Ս. Պ. կ.	III
Salix amygdaloides Anderss f. concolor Winm. et Greb.	[1]	Կիրովական	Գ. ամենուրեք	կ.	V
Salix grachypoda (Trautv. et Mog.) Kom. f. argentea hort.	[23]	Կիրովական	Գ. ամենուրեք	կ.	VI-
Salix purpurea L. v. arabensis hort.	[28]	Երևան	Գ. ամենուրեք	կ.	
Sambucus nigra L. f. albo-variegata (West.) Schwer.	[30]	Երևան	Գ. 4, 5, 13, 14, 20—25, 28	կ.	VII-
Sambucus nigra L. f. laciniata (L.) Zabel.	[4, 13, 15, 21]	Երևան, Կիրովական, Լուսավան	Գ. 4, 5, 13, 14, 20—25, 28	կ.	V
Sambucus nigra L. f. albo-variegata (West.) Schwer.	[23]	Սևան	Գ. 4, 5, 13, 14, 20—25, 28	կ.	VII-
Sorbaria arborea Schneid. f. glabrata Rehd.	[28]	Երևան	Ծ. ամենուրեք	կ.	
Spiraea bumalda Burv. f. Anthony Waterer hort.	[23]	Կիրովական	Ծ. ամենուրեք	Ս. կ.	
Spiraea bumalda Burv. f. Froebelli Rehd.	[30]	Կիրովական	Ծ. ամենուրեք	Ս. կ.	
Sptraea cantontensis Lour. f. lanceolata Zbl.	[4]	Երևան	Գ. 4, 5, 13.14, 20—25	Ս. կ.	VIII լ
Spiraea japonica L. f. j. atrosanguinea Zbl.	[23]	Սևան	Գ. 4, 5, 13, 14, 20—25	Ս. կ.	VIII լ
Spiraea japonica L. f. f. macrophilla (Simon-Louis) Zbl.	[9]	Երևան, Կիրովական, Էջմիածին	Գ. 4, 5, 13, 14, 20—25	Ս. կ.	V
Spiraea japonica L. f. f. pumila hort.	[30]	Երևան	Գ. 4, 5, 13, 14, 20—25	Ս. կ.	IV-
Spiraea nipponica Maxim f. toxensis (Wlaha.) Maxim.	[23]	Կիրովական	Գ. 4, 5, 13, 14, 20—25	Ս. կ.	
Symphoricarpos orbiculatus Moench. f. variegatum (Cowell) Rehd.	[28]	Երևան	Գ. ամենուրեք	Ս. կ.	VII-
Thuja occidentalis L. f. compacta Carr.	[20]	Կիրովական	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—29	Ս. կ.	Iբ
Thuja occidentalis L. f. globosa Gord.	[20]	Կիրովական	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	IIգ
Thuja occidentalis L. f. ericoides hort.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	IVգ
Thuja occidentalis L. f. fastigiata Jacq.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	
Thuja occidentalis L. f. lutescens Hesse.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	Iբ
Thuja occidentalis L. f. wareana hort.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	V
Thuja occidentalis L. f. woodwardii Spaeth.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ	
Thuja occidentalis L. f. variegata West.	[24]	Կիրովական	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	VII
Thuja plicata Lamb. f. albo-maculata hort.	[24]	Իջևան	Գ. 2—5, 7—9, 12—15, 18, 23—25	Ս. կ.	VII-
Ulmus densa Lifw.	[4]	Երևան	Գ. 4, 13—14, 23—25. 28, 29	Ս.	IIգ
Ulmns foliacea Gilib. f. umbraculifera (Trautv.) Rehd.	[4]	Երևան	Գ. 4, 13—14, 23—25, 28, 29	Ս.	IIգ
Ulmus foliacea Gilib. f. argenteo-variegata (West.) Rehd.	[4]	Երևան	Գ. 4, 13—14, 23—25, 28, 29	Ս.	VII-
Ulmus foliacea Gilib. f. pendula (Henry) Rehd.	[16]	Երևան	Գ. 4, 13—14, 23—25, 28, 29	Ս.	III
Viburnum opulus L. f. roseum (L.) Hegi.	[4, 23, 24]	Երևան, Իջևան, Կիրովական	Գ. ամենուրեք	Պ. կ.	VIII լ
Vinca minor L. f. argenteo-varidgata (West.) Rehd.		Երևան	Գ. 4, 13—14, 23—25, 28, 29		VII-
Vinca minor L. f. aureo-variegata (West.) Rehd.		Երևան	Գ. 4, 13—14, 23—25, 28, 29		VIIգ

3. Բույսի դեկորատիվությունը։ Բույսերի պարտիզային ձևերը ըստ իրենց դեկորատիվ արժանիքների խմբավորել ենք հետևյալ կերպ.

I. Բրգաձև, սյունաձև, կոնուսաձև, իլիկաձև սաղարթով (Iբ, Iս, Iկ, Iի)։

II. Օվալաձև, գնդաձև, հովանոցաձև սաղարթով (IIօ, IIգ, IIհ)։

III. Լացող սաղարթով։

IV. Ցածրաաճ, սողացող ձևեր (IVց, IVս)։

V. Օրիգինալ տերևներ ունեցող։

VI. Սաղարթի միատոն գունավորմամբ (արծաթագույն, դեղին, կարմրավուն (VIա, VIդ, VIկ)։

VII. Խայտաբղետ գունավորմամբ (սպիտակ-արծաթագույն, դեղնա-ոսկեգույն (VIIս, VIIդ)։

VIII. Ծաղիկների ձևով—լիաթերթ, խոշոր, մանր, առանձնահատուկ գունավորմամբ (VIIIլ, VIIIխ, VIIIմ, VIIIգ)։

Անհրաժեշտ է առաջիկայում պարտիզային նորանոր ձևեր փորձարկել հանրապետության ամենատարբեր հողակլիմայական պայմաններում և ամենահեռանկարային ձևերը լայնորեն ներդնել կանաչապատման պրակտիկայում։ Միաժամանակ պետք է արագորեն բազմացնել և օգտագործել աղյուսակում բերվող այն պարտիզային ձևերը, որոնք մեր կարծիքով միանգամայն հեռանկարային են մեր հանրապետության համար։

ՀՍՍՀ ԳԱ բուսաբանական
ինստիտուտ

Ստացված է 24.III 1975 թ.

Л. В. АРУТЮНЯН, Л. А. ХАЧАТРЯН

САДОВЫЕ ФОРМЫ ДРЕВЕСНЫХ ПОРОД В УСЛОВИЯХ АРМЯНСКОЙ ССР

Резюме

В статье приводится список тех садовых форм древесных растений, которые по литературным данным и по результатам проведенной нами научной инвентаризации, в настоящее время встречаются или были испытаны в условиях Армении после установления советской власти. Из общего числа 186 садовых форм в настоящее время в зеленых насаждениях республики имеется 75 (представители 46 видов).

Приводятся латинские названия садовых форм, литературные источники, в которых они описаны, пункт, где произрастает или произрастала когда-либо данная садовая форма, обсуждается перспективность внедрения в отдельных дендрологических районах и подрайонах Армении, описываются способы размножения, растения группируются по признакам декоративности (форма кроны—пирамидальная, конусовидная, колоновидная, овальная, шаровидная, плакучая, стелющаяся; растения с оригинальными листьями; оригинальной однотонной окраской кроны — серебристая, желтая, красная; пестролистные формы и растения, отличающиеся оригинальными цветками).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Абрамян Р. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 8, Ереван, 1949.
2. *Абрамян Р. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 7, Ереван, 1948.
3. *Азарян В. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 20, Ереван, 1965.
4. *Арутюнян Л. В.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 18, Ереван, 1961.
5. *Арутюнян Л. В.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 20, Ереван, 1965.
6. *Арутюнян Л. В.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 21, Ереван, 1966
7. *Арутюнян Л. В.* Бюлл. Главного ботанического сада АН СССР, вып. 68, М., 1968.
8. *Арутюнян Л. В.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 23, Ереван, 1973.
9. *Арутюнян Л. В.* Бюлл. Главн. бот. сада АН СССР, вып. 75, М., 1969.
10. *Арутюнян Л. В.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 23, Ереван, 1974.
11. *Атабекян Р. С.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 21, Ереван, 1966.
12. *Бозоян А. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 20, Ереван, 1965.
13. *Григорян Е. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 13, Ереван, 1953.
14. *Григорян Е. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 14, Ереван, 1954.
15. *Григорян Е. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 16, Ереван, 1957.
16. *Казарян В. О.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 9, Ереван, 1950.
17. *Коллесников А. И.* Декоративные формы древесных пород. Изд. Мин. комм. хоз-ва РСФСР, М., 1958.
18. *Коллесников А. И.* Декоративная дендрология. Бумиздат, М., 1961.
19. *Леонович Э. Л.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 10, Ереван, 1950.
20. *Махатадзе Л. Б.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 6, Ереван, 1948.
21. *Махатадзе Л. Б.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 17, Ереван, 1959.
22. *Махатадзе Л. Б.* и *Биричевская Л. П.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 9, Ереван, 1950.
23. *Махатадзе Л. Б., Чубарян Т. Г.* и *Азарян В. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 19, Ереван, 1963.
24. *Саядян Л. С.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 22, Ереван, 1970.
25. *Чубарян Т. Г.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 11, Ереван, 1951.
26. *Чубарян Т. Г.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 16, Ереван, 1957.
27. *Чубарян Т. Г.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 20, Ереван, 1965.
28. *Ярошенко Г. Д.* и *Таирян Н. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 5, Ереван, 1948.
29. *Ярошенко Г. Д.* и *Григорян Е. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 5, Ереван, 1948.
30. *Ярошенко Г. Д., Наваскардян О. А.* и *Григорян Е. А.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 10, Ереван, 1950.
31. *Ярошенко Г. Д.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 12, Ереван, 1951.
32. *Ярошенко Г. Д.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 12, Ереван, 1951.
33. *Ярошенко Г. Д., Григорян Е. А.* и *Лавчян Э. К.* Бюлл. Бот. сада АН АрмССР, 13, Ереван, 1953.